

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

29.05. 2001թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Ա. Չիլինգարյան, Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Ա. Սիմոնյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ- ծառայության աշխատակազմի ղեկավար*), Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության պետ*), Գ. Սարգսյան (*Վիճակագրական դասակարգիչների բյուրոյի պետ*), Ն. Պողոսյան (*Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ջ. Ավոյան (*Զբաղվածության և աշխատանքի վարձատրության բաժնի պետ*), Լ. Հարությունյան (*Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիաների բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների և միջազգային համադրումների բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ յոթ հարց.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան/

2. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Չիլինգարյան/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Անանյան/

4. «Աշխատուժի ընտրանքային հետազոտություն» հարցաթերթը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ջ. Ավոյան/

5. Պետական վիճակագրական փաստաթղթերի դասակարգմանը հավանություն տալու մասին.

/Ներկայացնող՝ Ա. Չիլինգարյան/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն 2001թ. մարտի 26-30-ը Հելսինկիում կայացած «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Սարգսյան, Ն. Պողոսյան/

6.2 Հաշվետվություն 2001թ. մարտի 26-31-ը Բանգկոկ կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Լ. Հարությունյան/

6.3 Հաշվետվություն 2001թ. ապրիլի 10-12-ը Վիեննայում կայացած «Վիճակագրական համակարգերի կազմակերպումը և կառավարումը» խորագրով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

6.4 Հաշվետվություն 2001թ. մայիսի 2-5-ը Ժնևում կայացած «Ռեգիոնալ Գեոդերային WEB - էջ» թեմայով UNECE/UNDP –ի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

7. Այլ հարցեր

7.1 «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքիչության վիճակի մասին» տեղեկագրի հրապարակումը մինչև ս.թ. մայիսի 15-ը հետաձգելու վերաբերյալ 2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում փոփոխություն կատարելու մասին.

/Ներկայացնող՝ Գ. Անանյան/

7.2 Հաղորդում ՀՀ-ում 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական գամբյուղի կշիռների հաշվարկման 2001թ. առաջին եռամսյակի արդյունքների մասին.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Խորհրդի անդամ Գ. Անանյանի կողմից առաջարկվեց օրակարգի նախագծից հանել 7.2 կետը՝ հաշվի առնելով վերջինիս արդեն իսկ կատարված լինելու հանգամանքը: ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նիստի օրակարգի նախագիծը քվեարկությամբ հաստատվեց համապատասխան փոփոխությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան/

Նշվեց, որ «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 6, 8, 10 և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62 հոդվածների պահանջներին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության ս.թ. մայիսի 15-ի թիվ 412 որոշման երկրորդ կետի դրույթը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատման են ներկայացվում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Երևան քաղաքի գործակալության կանոնադրությունները:

Դիտողություններ և առաջարկություններ.

Ա. Չիլինգարյան - 1.6 կետում հարկ է ավելացնել գործակալության լրիվ անվանումը երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն,

- 2.6 կետում «գործառնական» բառը հարկ է փոխարինել «կառուցվածքային» բառով,

- 5.4 կետում հարկ է հանել «պետական» բառը և «վիճակագրական հաշվետվություններ» բառերը փոխարինել «վիճակագրական փաստաթղթեր» բառերով,
- 6.2 կետում «ներկայացմամբ» բառը հարկ է փոխարինել «հետ» բառով,

- 6.2.1 կետում հարկ է ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. գ/ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ-ծառայության աշխատակազմի ղեկավարի հետ համաձայնեցնելով հաստատում է հաստիքացուցակը,

- 6.2.1 կետի ը/ ենթակետից հարկ է հանել ը/ համարակալումը,
- նույն փոփոխությունը կատարել 6.2.2 կետի գ/ ենթակետում,

- 7 կետում հարկ է հանել «հաստատված է» բառը և աստղանիշով կատարել հղում հետևյալ բովանդակությամբ. «Մխենատիկ կառուցվածքը կցվում է»,

- 2.3 կետում հարկ է ավելացնել «համաձայնեցնելով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի համապատասխան անդամի հետ»,
- հարկ է կանոնադրություններում ամբողջությամբ գրել գործակալությունների տարածքային բաժինների լրիվ անվանումները:

Ս. Մնացականյան

- 3.9 կետում ավելացնել նաև «համաձայնեցնելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավարի հետ» բառերը,

- ավելացնել նոր 8-րդ կետ «Անցումային դրույթներ» վերնագրով հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից սույն կանոնադրության հաստատման պահից ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության մարզային վարչությունը վերակազմավորվում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության՝ դառնալով նրա իրավահաջորդը»,

- 7 կետում ավելացնել «Մարդահամարի և այլ հետազոտությունների նպատակով ստեղծված հաշվարարական և հետազոտական տեղամասերը ևս համարվում են գործակալության ստորաբաժանումներ» բառերը,

- 6.2.1 կետի վերջին պարբերությունում «բաժիններից մեկի պետի վրա» բառերը հարկ է փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումներից մեկի ղեկավարի վրա» բառերով, իսկ «գործակալության պետի առաջարկությամբ» բառերից առաջ ավելացնել «որպես կանոն» բառերը,

- 3.9 կետում հարկ է հանել «կանոնադրությամբ նախատեսված» բառերը, ավելացնել «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան բառերը «Մահմանված կարգով» բառերից առաջ:

Յու. Պողոսյան

- 1.5 կետում հարկ է կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ «Իր հրապարակումներում և այլ փաստաթղթերում օգտագործում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությամբ հաստատված ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության խորհրդանշանը»,

- 4.5 կետում «սխալներ» բառից հետո հարկ է ավելացնել «և անճշտություններ» բառը:

Բոլոր առաջարկություններն ու դիտողությունները ընդունվեցին զեկուցողի կողմից:

Որոշեցին՝

1. Հաստատել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Արարատի մարզային գործակալության կանոնադրության ու կառուցվածքի, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Առաջարկել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահին՝ մեկ ամսյա ժամկետում հրամանագրել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների ղեկավարներին:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հանձնարարել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավարին՝ մեկ ամսյա ժամկետում կազմակերպել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների պետերի կողմից հաստիքացուցակների հաստատումը:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Առաջարկել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գծով անդամին՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ – ծառայության աշխատակազմի ղեկավարի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալությունների պետերի հետ համատեղ, մշակել և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի քննարկմանը ներկայացնել մարզային գործակալությունների և դրանց տարածքային ստորաբաժանումների կողմից սպասարկվող համայնքների ցուցակների օպտիմալացման ուղղությամբ առաջարկություններ, ինչպես նաև՝ առաջարկություններ մարզի ներսում ոչ համայնքային կտրվածքով վիճակագրական սպասարկման օբյեկտների (միջհամայնքային հողատարածքներ և այլն) օպտիմալացման ուղղությամբ:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Չիլինգարյան/

Նշվեց, որ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի 07.03.2001թ. «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխող հանձնարարականների ցանկը հաստատելու մասին» թիվ 27 հրամանի 4 կետի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնին հանձնարարվել էր ներկայացնել առաջարկություն գիտամեթոդաբանական խորհրդի վերաբերյալ: Ի կատարումն վերոնշյալ հանձնարարականի, ՀՀ վիճակագրության խորհրդի հաստատմանն է ներկայացվում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրությունը:

Առաջարկություններ և դիտողություններ՝

Ս. Մնացականյան - 5.1 կետի ա/ ենթակետում «կոմպլեքսայնություն» բառի փոխարեն հարկ է գրել «համալիրություն»,

- 8 կետում «գիտական հիմնարկների» արտահայտության փոխարեն հարկ է գրել «Գիտակրթական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների»,

- խմբագրական բնույթի դիտողություններ:

Բոլոր առաջարկություններն ու դիտողությունները ընդունվեցին զեկուցողի կողմից:

Որոշեցին՝ հաստատել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի կանոնադրության, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Անանյան/

Նշվեց, որ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի 07.03.2001թ. «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխող հանձնարարականների ցանկը հաստատելու մասին թիվ 27 հրամանի 11 կետի ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կենտրոնական ապարատում ստեղծվել է աշխատանքային խումբ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գ. Անանյանի գլխավորությամբ, ՀՀ – ում բիզնես ռեգիստրի վարման կարգ մշակելու նպատակով: Վերոնշյալ կարգը մշակված է և ներկայացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատմանը:

Առաջարկություններ և դիտողություններ՝

Ս. Մնացականյան – 9 կետը հարկ է տեղափոխել որպես երկրորդ կետ.

Որոշեցին՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգի, բոլոր դիտողություններով և առաջարկություններով խմբագրված, տարբերակը:

2. Սահմանել, որ անհատ ձեռնարկատերերի մասով բիզնես ռեգիստրի տվյալների բազայի ձևավորման համար տեղեկությունների հավաքագրումը ուղղակի աղբյուրներից գործում է 2003թվականի հունվարի 1-ից:

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հանձնարարել՝

3.1. ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի բաժնին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել բիզնես ռեգիստրի տարեկան հարցաթերթի և դրա լրացման հրահանգի նախագծերը՝ ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացնելու նպատակով:

3.2. ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել հիմնական և ոչ հիմնական գործունեության տեսակների որոշման կանոնները՝ ՀՀ ՎՊԽ հաստատմանը ներկայացնելու նպատակով:

3.3. ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնին՝ մեկ ամսվա ընթացքում ՀՀ ՎՊԽ ներկայացնել ընտրանքի նյութը՝ խորհրդի հավանությանը արժանանալու նպատակով:

3.4. Առաջարկել ՀՀ ՎՊԽ ձեռնարկատիրական գործունեության կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների գշով անդամներին (բիզնես ռեգիստրի բաժնին)՝ բիզնես ռեգիստրի տվյալների բազայի արդիականացման նպատակով միջոցներ ձեռնարկել ապահովելու համար բիզնես ռեգիստր ստեղծելու (տեղեկատվական էլեկտրոնային բազայի) ուղղությամբ՝ մասնավորապես տեղեկությունների հավաքագրման ապահովման համար

- ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի մասով,

- ՀՀ պետական եկամուտների նախարարության մասով,

- ՀՀ լիցենզավորող մարմինների մասով:

/արձանագրային/

4. «Աշխատուժի ընտրանքային հետազոտություն» հարցաթերթը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Ջ. Ավոյան/

Նշվեց, որ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատմանը ներկայացված հարցաթերթում կատարված են անհրաժեշտ փոփոխություններ, ըստ Խորհրդի նախորդ նիստում ներկայացված առաջարկությունների և դիտողությունների:

Որոշեցին՝ հաստատել «Աշխատուժի ընտրանքային հետազոտություն» հարցաթերթը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգը:

/Քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Պետական վիճակագրական փաստաթղթերի դասակարգմանը հավանություն տալու մասին.

/Ներկայացնող՝ Ա. Չիլինգարյան/

Նշվեց, որ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի 07.03.2001թ. թիվ 27 հրամանով տրված հանձնարարականի (Հանձնարարականների համախմբված ցանկի 2 կետի 3 մաս) վիճակագրական հաշվետվական ձևերի դասակարգման եղանակների առումով կատարվել են հետևյալ աշխատանքները՝ յուրաքանչյուր հաշվետվական ձևի վերաբերյալ նախապես մշակված աղյուսակով տեղեկատվություն է հավաքագրվել ՀՀ ԱՎԾ պետական վիճակագրական հաշվետվություններ հավաքագրող բաժիններից, ապա այդ տեղեկատվությունը մշակվել է ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնում: Ըստ նախնական դասակարգման ստացվել են հետևյալ արդյունքները՝

- (1) հաշվետվական ձևեր, որոնք ՀՀ ԱՎԾ կամ դրա տարածքային ստորաբաժանում են ներկայացվում իրավաբանական անձանց, հիմնարկների, անհատ ձեռնարկատերերի կողմից,
- (2) հաշվետվական ձևեր, որոնք ՀՀ ԱՎԾ են ներկայացվում նախարարությունների, գերատեսչությունների կողմից,
- (4) հաշվետվական ձևեր, որոնք ՀՀ ԱՎԾ կամ դրա տարածքային ստորաբաժանում են ներկայացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,
- (5) հաշվետվական ձևեր, որոնք ներքին են (այսինքն դրանք հանդիսանում են տարածքային ստորաբաժանումների և ՀՀ ԱՎԾ կենտրոնական ապարատի միջև շրջանառության մեջ գտնվող հաշվետվություններ, աղյուսակներ, տեղեկանքներ, որոնք կազմվում են կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների կամ վիճակագիրների կողմից հավաքագրված տեղեկատվության հիման վրա),
- (6) հաշվետվական ձևեր, որոնք կազմակերպությունների կողմից ներկայացվում են այլ մարմիններին (ոչ ՀՀ ԱՎԾ), որտեղ և ամփոփվում են տվյալները և ներկայացվում ՀՀ ԱՎԾ,
- (8) խառը ձևեր, որոնք նախապես դժվար է դասակարգել վերընշված որևէ տեսակի, քանի որ նույն հաշվետվությունը ներկայացնում են ինչպես կազմակերպությունները, այնպես էլ վարչական ռեգիստրները:

(1) տեսակի ձևերի քանակը 112, այդ թվում կան 37 ձևեր, որոնք հիմնականում ներկայացնում են կազմակերպությունները, սակայն կան նաև մի քանի վարչական ռեգիստր-ներկայացնողներ:

(2) և (4) տեսակի ձևերը, որոնք ըստ էության հանդիսանում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վարչական ռեգիստրներից հավաքագրվող, համապատասխանաբար՝ 12 և 10,

(5) տեսակի ձևեր, որոնք ըստ էության հաշվետվություններ չեն, այլ հանդիսանում են դրանց ամփոփումներ՝ աղյուսակներ, հավելվածներ, տեղեկանքներ՝ 22

(6) տեսակի ձևերը՝ 13 են: Սրանք այն ձևերն են, որոնք հավաքագրում են վարչական ռեգիստրները, և հետագայում նույն ձևի մեջ ամփոփելով տեղեկությունները ներկայացնում են ՀՀ ԱՎԾ-ին:

(8) տեսակի ձևերը, որոնք դեռ անհրաժեշտ է կողմնորոշվել, թե որտեղ պետք է դրանց դասակարգել, 33 են:

Առաջարկվեց ունենալ հետևյալ անվանումներով վիճակագրական փաստաթղթերը՝

1. պետական վիճակագրական հաշվետվություններ (սկզբնական վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից հավաքագրվող),

2. ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություններ (վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններից հավաքագրվող),

3. վարչական վիճակագրական հաշվետվություններ, (վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից սկզբնական վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից հավաքագրվող)

4. աղյուսակներ, տեղեկանքներ, հավելվածներ (ներքինների դեպքում):

Որոշեցին՝

1. Հավանություն տալ ՀՀ ԱՎԾ կողմից հավաքագրվող (պետական վիճակագրություն իրականացնող մարմինն տրամադրվող) վիճակագրական տեղեկատվության գծով փաստաթղթերի հետևյալ խմբավորմանը.

ա/ անմիջականորեն վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից (բացի վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների) հավաքագրվող վիճակագրական փաստաթղթեր,

բ/ վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններից հավաքագրվող վիճակագրական փաստաթղթեր,

ա/- ի գծով հավանություն տալ «պետական վիճակագրական հաշվետվություն» տեսակի կցվող երաշխավորվող նմուշին:

Սույն որոշման ընդունման պահին գործնականում կիրառվող պետական վիճակագրական հաշվետվությունների դիմային էջի վրա առկա այն տվյալները, որոնք չեն փոխանցվում վերը նշված երաշխավորված ձևի դիմային էջ նախատեսվում է հավաքագրել տարեկան պարբերականությամբ, մասնավորապես բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի միջոցով (տես՝ ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի 29.05.01թ. «Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին» որոշումը):

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ կոնկրետ հետազոտությունների համար կարող են հաստատվել նաև առանձին տեսակի փաստաթղթեր:

բ/-ի գծով հավանություն տալ «ամփոփ պետական վիճակագրական հաշվետվություն» տեսակի կցվող երաշխավորվող նմուշին:

«Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի պահանջներին համապատասխան մշակվող «Վարչական ռեգիստրներից տեղեկությունների հավաքագրման կարգի» շրջանակում վարչական վիճակագրություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի հետ տեղեկատվական հոսքերի կանոնակարգման, մշակման

արդյունավետությունից (հարմարավետությունից) էլնելով, կարող են կոնկրետ դեպքում կիրառվել նաև այլ տիպի փաստաթղթեր, մասնավորապես տեղեկանքներ և այլն:

2. Հավանություն տալ (հիմք ընդունելով նաև «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածի «գ» կետը և 13 հոդվածը) վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից հավաքագրվող տեղեկությունների համար կիրառվելիք «վարչական վիճակագրական հաշվետվություն» տեսակի վարչական հաշվառման փաստաթղթի կցվող երաշխավորվող նմուշին:

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմնի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ մարմնի (նախարարություն, գերատեսչություն, համայնք) խնդիրներին (և գործառույթներին) համապատասխան ինքն է սահմանում այն տվյալների (ցուցանիշների) ցանկը, որը պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով հավաքագրվի իրավաբանական անձանցից, պետական հիմնարկներից և այլն: Միաժամանակ դրանցում (համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 6 մասի «ա» ենթակետի) պարտադիր է ներառել մասնավորապես ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրում» ընդգրկված՝ վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ՀՀ ԱՎԾ ներկայացվող անհրաժեշտ ցուցանիշները:

Վերը նշվածի կապակցությամբ ՀՀ ԱՎԾ-ն ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդաբանական օժանդակություն համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված ՀՀ ԱՎԾ կանոնադրության դրույթների:

3. Առաջարկել ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գծով անդամին.

ա/ հիմք ընդունելով սույն որոշման երկրորդ կետում շարադրված սկզբունքային մոտեցումները, ձեռնարկել «Վարչական ռեգիստրներից տեղեկությունների հավաքագրման կարգի» մշակումը և ներկայացումը վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններին:

բ/ ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի հետ համատեղ և քննարկելով ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի համապատասխան անդամի հետ պատրաստել վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններին հղվող գրություններ՝ նրանց տեղեկացնելով սույն որոշման համապատասխան դրույթներին և «Վարչական ռեգիստրներից տեղեկությունների հավաքագրման կարգի» մշակման գործառույթի հարցում համագործակցելու մասին:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները. կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն 2001թ. մարտի 26-30-ը Հելսինկիում կայացած «Վիճակագրական դասակարգումներ» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Սարգսյան, Ն. Պողոսյան/

6.2 Հաշվետվություն 2001թ. մարտի 26-31-ը Բանգկոկ կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Լ. Հարությունյան/

6.3 Հաշվետվություն 2001թ. ապրիլի 10-12-ը Վիեննայում կայացած «Վիճակագրական համակարգերի կազմակերպումը և կառավարումը» խորագրով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան/

6.4 Հաշվետվություն 2001թ. մայիսի 2-5-ը Ժնևում կայացած «Ռեգիոնալ Գեոդերային WEB - էջ» թեմայով UNECE/UNDP –ի աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

Որոշեցին՝ բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

7. Այլ հարցեր

7.1 Հաղորդում ՀՀ-ում 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման 2001թ. առաջին եռամսյակի արդյունքների մասին.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/

Աղյուսակների տեսքով ներկայացվեց տեղեկատվություն սպառողական գների ինդեքսների վերաբերյալ 2001 թվականի հունվար-ապրիլ ամիսների համար՝ սպառողական զամբյուղի հին (2000թ. համար օգտագործված) և նոր (2001թ. համար օգտագործված) կշիռներով հաշվարկված:

Որոշեցին՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն,
2. Հանձնարարել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության գների և միջազգային համադրումների բաժնին՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդին նմանօրինակ հաղորդում ներկայացնել նաև 2001թ. հունվար – սեպտեմբեր ամիսների համար:

/արձանագրային/

/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան